Armenian - Բարու Մտածումը Սուրբ Գրքերում - Good Mind Scriptures

ՂԵԻՏԱԿԱՆ **24:12** Այդ մարդուն հսկողութեան տակ պահեցին, որպէսզի Աստծու հրամանով դատեն նրան։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ **18:6** Իսկ եթէ իսրայէլացիներին պատկանող մի քաղաքից գայ այնտեղ բնակուող ղեւտացին եւ ըստ իր ցանկութեան գայ Տիրոջ ընտրած վայրը,

ՀՌՈԻԹ **1:18** Երբ Նոոմինը տեսաւ, որ նա հաստատ որոշել է գնալ իր հետ, այլեւս չխօսեց այդ մասին նրա հետ։

1 ՄՆԱՑՈՐԴԱՑ **28:9** Եւ դու, որդի՛ իմ Սողոմոն, ճանաչի՛ր քո հայրերի Աստծուն, ծառայի՛ր նրան ամբողջ սրտով ու յօժար մտքով, քանզի Տէրը քննում է ամենքի սրտերը, եւ նա գիտի բոլորի մտածումները. եթէ փնտռես նրան, նա կը գտնուի քեզ համար, իսկ եթէ թողնես նրան, նա քեզ կը լքի իսպառ։

2 ԵԶՐԱՍ **4:6** Պարսկաստանի Արտաշէս թագաւորի ժամանակ, նրա թագաւորութեան սկզբին, նրանք ամբաստանութեան թուղթ գրեցին Հրէաստանի եւ Երուսաղէմի բնակիչների դէմ։

ՅՈԲ **23:13** Հապա եթէ նա այսպէս դատ անի՝ էլ ո՞վ կը լինի, որ դիմադարձի,որովհետեւ նա ինչ որ կամեցել՝ այն էլ արել է։

ԱՌԱԿՆԵՐ **29:11** Անզգամն իր ողջ բարկութիւնը թափում է միանգամից, բայց իմաստունը համբերում է մեղմութեամբ։

ԵՍԱՅԻ **26:3** որ հոգում է ճշմարտութեան մասին եւ ապահովում խաղաղութիւնը։

ՄԱՐԿՈՍԻ **5:15** Եկան Յիսուսի մօտ եւ տեսան դիւահարին, որ նստել էր՝ հագնուած եւ զգաստացած, նրան, որ լեգէոն ունէր. եւ զարհուրեցին։

ՂՈՒԿԱՍԻ **8:35** Եւ երբ մարդիկ դուրս եկան կատարուածները տեսնելու եւ եկան Յիսուսի մօտ ու գտան այն մարդուն, որից դեւերը ելել էին, - որը հագնուած եւ զգաստացած՝ նստած էր Յիսուսի ոտքերի մօտ, - վախեցան։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ **17:11** քանի որ սրանք աւելի ազնիւ մարդիկ էին, քան թէ Թեսաղոնիկէում եղածները։ Սրանք ամենայն յօժարութեամբ ընդունեցին խօսքը. ամբողջ ժամանակ քննում էին գրուածքները՝ իմանալու, թէ այդ բաները այդպէ՞ս են։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ **20:19** ծառայելով Տիրոջը ամենայն խոնարհութեամբ եւ բազում արտասուքով ու փորձութիւններով, որ հրեաների նենգութիւնների պատճառով ինձ պատահեցին։

ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **7:25** Բայց գոհութիւն Աստծու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի

միջոցով։ Ապա ուրեմն ես ինքս իմ մտքով ծառայում եմ Աստծու օրէնքին, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին։
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **8:6** քանի որ մարմնաւոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը կեանք եւ խաղաղութիւն.
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **8:27** Իսկ նա, ով քննում է սրտերը, գիտէ, թէ ինչ խորհուրդ ունի Հոգին, քանի որ ըստ Աստծու կամքի է բարեխօսում սրբերի համար։
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **11:34** Որովհետեւ ո՞վ գիտցաւ Տէրոջ միտքը, կամ ո՞վ անոր խորհրդատու եղաւ։
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **12:2** Եւ այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ, որպէսզի դուք քննէք լաւը, եւ թէ ի՛նչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը։
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **12:16** համերա՛շխ եղէք միմեանց հետ. մի՛ մեծամտացէք, այլ խոնա՛րհ եղէք խոնարհների հանդէպ. դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրէք.
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **14:5** Մէկը բարձր է դասում օրը՝ օրից, իսկ միւսը՝ բոլոր օրերը՝ հաւասար. իւրաքանչիւր ոք թող շարժուի, ինչպէս ինքն է դատում։
ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ **15:6** որպէսզի միասիրտ եւ միաբերան փառաւորէք Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը։
1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **1:10** Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որ բոլորդ էլ նոյն խօսքը ունենաք. եւ ձեր մէջ բաժանումներ չլինեն. քանզի հաստատ էիք նոյն մտքի եւ նոյն մտածման մէջ։
1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **2:16** Իսկ արդ, ո՞վ իմացաւ Տիրոջ մտածումը, որ խորհուրդ տայ նրան. բայց մենք ունենք Քրիստոսի մտածումը։
2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **7:7** ոչ միայն նրա գալով, այլեւ այն մխիթարութեամբ, որով մխիթարուել էր նա ձեզ մօտ՝ պատմելով մեզ ձեր տենչանքը, ձեր լացուկոծը, ձեր նախանձախնդրութիւնը իմ հանդէպ, այնպէս որ ես է՛լ աւելի ուրախ եղայ։
2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **8:12** քանզի, եթէ առաջուց յօժարութիւնը կայ, տրուածը ընդունելի է ըստ տուողի ունեցածի եւ ոչ թէ ըստ չունեցածի.
2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **9:2** որովհետեւ գիտեմ ձեր յօժարակամութիւնը, որով ձեր մասին պարծեցել եմ մակեդոնացիների մօտ, թէ՝ Աքայեցիները անցեալ տարուանից պատրաստ են այդ օգնութեանը։ Եւ ձեր նախանձախնդրութիւնը շատերին խթանեց։
2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ **13:11** Եւ վերջապէս, եղբայրնե՛ր, ո՛ղջ եղէք, հաստատո՛ւն մնացէք, մխիթարուեցէ՛ք, միաբա՛ն եղէք, խաղաղութի՛ւն արէք. եւ խաղաղութեան ու սիրոյ Աստուածը թող լինի ձեզ հետ։
ԵՓԵՍԱՑԻՆԵՐ **4:23** նորոգուեցէ՛ք ձեր մտքով եւ հոգով ու հագէ՛ք նոր մարդը,
ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ **2:2,3** կատարեա՛լ դարձրէք իմ ուրախութիւնը. նո՛յն բանը

խորհեցէք, նո՛յն սէրն ունեցէք ձեր մէջ, եղէ՛ք միաշունչ, միախորհուրդ։ 3 Մի՛ արէք որեւէ բան հակառակութեան ոգով, ոչ էլ որեւէ բան՝ սնապարծութեամբ, այլ խոնարհութեամբ մէկդ միւսին աւելի լա՛ւ համարեցէք, քան ինքներդ ձեզ։

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ **4:2** Խնդրում եմ Եւոդիային եւ խնդրում եմ Սինտիքին, որ նոյն խորհուրդն ունենան ի Տէր։

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ **4:7** Եւ Աստծու խաղաղութիւնը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով։

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐ **3:12** Որպէս Աստծու ընտրեալներ, սրբեր եւ սիրելիներ, հագէ՛ք, ուրեմն, գութ, ողորմութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, համբերատարութիւն՝

2 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ **2:2** դուք իսկոյն չխռովուէք ձեր մտքում եւ չզարհուրէք ո՛չ հոգով, ո՛չ խօսքով, ո՛չ էլ թղթերով՝ իբր թէ մեր կողմից գրուած, որպէս թէ արդէն եկած հասած լինի Տիրոջ օրը։

2 ՏԻՄՈԹԷՈՍ **1:7** որովհետեւ Աստուած մեզ երկչոտութեան ոգի չտուեց, այլ՝ զօրութեան, սիրոյ եւ զգաստութեան։

ՏԻՏՈՍ **2:6** Երիտասարդներին նոյնպէս յորդորի՛ր լինել խոհեմ,

ԹՈՒՂԹ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ **8:10** Արդարեւ սա՛ է այն ուխտը՝ որ պիտի հաստատեմ Իսրայէլի տան հետ այդ օրերէն ետք,- կ՚ըսէ Տէրը.- իմ օրէնքներս պիտի դնեմ անոնց միտքին մէջ, զանոնք պիտի գրեմ անոնց սիրտին վրայ, ու ես պիտի ըլլամ անոնց Աստուածը, անոնք ալ պիտի ըլլան իմ ժողովուրդս։

1 ՊԵՏՐՈՍ **1:13** Ուստի, զօտեպնդելով ձեր միտքը, զգաստ, կատարեալ յոյսով սպասեցէ՛ք Յիսուս Քրիստոսի յայտնութեան ժամանակ ձեզ հասանելիք շնորհին։

1 ՊԵՏՐՈՍ **5:2** արածեցրէ՛ք Աստծու այդ հօտը, որ ձեզ է յանձնուած, վերակացու լինելով ոչ թէ հակառակ ձեր կամքին, այլ՝ յօժարակամ, ըստ Աստծու. ոչ թէ շահախնդրութեամբ, այլ՝ յօժարութեամբ.

2 ՊԵՏՐՈՍ **3:1** Սիրելինե՛ր, գրում եմ ձեզ այս երկրորդ թուղթը, որով ձեր մաքուր մտքերն եմ արթնացնում յիշեցման համար.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ **17:9** Այստե՛ղ է ահա, որ պէտք է իմաստութիւն ունեցող միտք ունենալ։ Եօթը գլուխները եօթը լեռներն են, որոնց վրայ նստել էր կինը։ Նրանք նաեւ եօթը թագաւորներն են.